


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՈՂ ՃՅՈՒՂԵՐԻ
ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՁԵՆՈՒԹՅԱՆ (ԱՃԹՆ) 2018Թ ԶԵԿՈՒՅՑ

REPUBLIC OF ARMENIA EXTRACTIVE INDUSTRIES TRANSPARENCY INITIATIVE
(EITI) REPORT 2018



SUMMARY REPORT

ՍԵՂՄԱԳԻՐ



2020 Երեւան - Yerevan



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՈՂ ՃՅՈՒՂԵՐԻ
ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ
(ԱՃԹՆ) 2018Թ.**

ՉԵԿՈՒՅՑԻ ՍԵՂՄԱԳԻՐ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնությունը (ԱՃԹՆ) բնական պաշարների բաց և հաշվետու կառավարումը խթանող համաշխարհային ստանդարտ է
- ԱՃԹՆ-ի շրջանակներում որոշումներ ընդունող հիմնական մարմինը կառավարության, ընդերքօգտագործող ընկերությունների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներից կազմված բազմաշահառու խումբն է (ԲՇԽ)

ԱՃԹՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ




ՀԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀՈՍՔԵՐՆ ՈՒ ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՈՂ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

* Չեկույցի շրջանակներում հաշվետու տարվա համար (2018թ.) համադրվել են հետևյալ եկամտային հոսքերը՝



*Համաձայն ԲՀԽ որոշման՝ արդյունահանվող ճյուղերից ստացվող այն եկամտային հոսքերը, որոնց մասնաբաժինը հանքարդյունահանող ճյուղերից ստացվող եկամտային ընդհանուր հոսքերում կազմում են 1 տոկոս և ավելի, եական են և պետք է համադրվեն ԱԾԹՆ-ի զեկույցում (ԲՀԽ նիստի N12 արձանագրություն, 16.04.2019թ.): https://www.eiti.am/file_manager/EITI%20Documents/Minutes/MSG_meeting_minute_16_04_2019.pdf

** Չեկույցի շրջանակներում հաշվետու տարվա համար համադրվել են հետևյալ ընդերքօգտագործող ընկերությունները



** Հաշվետվության կազմման նպատակով հաշվետու ֆինանսական տարում 33 պետական բյուջե 150 միլիոն դրամի համարժեք կամ դրանից բարձր հարկեր և վճարումներ կատարող ընկերությունները համարվում են համադրվող ընկերություններ (ընդունվել է ԱԾԹՆ ԲՀԽ-ի նիստի 16.04.2019թ. N12 արձանագրությամբ): https://www.eiti.am/file_manager/EITI%20Documents/Minutes/MSG_meeting_minute_16_04_2019.pdf



ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՇՐՋԱՆԱԿԸ

Օգտակար հանածոների արդյունահանման թույլտվություն ստացած իրավաբանական անձանց ցանկ՝ 2018թ. դրությամբ

Ընդերքօգտագործող	Ընդերքօգտագործման պայմանագր համարը, տարեթիվը
1. «Պարամաունտ Գոլդ Մայնինգ» ՓԲԸ	Թիվ 089, 2012թ. հունիսի 12
2. «Մեդրաձոր գոլդ» ՍՊԸ	Թիվ ՊՎ-057, 2012թ. օգոստոսի 22
3. «Սագամար» ՓԲԸ	Թիվ ՊՎ-093, 2012թ. հոկտեմբերի 20
4. «Լեռ-Էքս» ՍՊԸ	Թիվ ՊՎ-094, 2012թ. օգոստոսի 16
5. «Ախթալայի լեռնահարստացման կոմբինատ» ՓԲԸ	Թիվ ՊՎ-103, 2012թ. հոկտեմբերի 20
6. «Ֆորչն Ռիզորսիս» ՍՊԸ	Թիվ ՊՎ-169, 2012թ. հոկտեմբերի 20
7. «Մոլիբդենի Աշխարի» ՍՊԸ	Թիվ ՊՎ-174, 2012թ. նոյեմբերի 7
8. «Չաարատ Կապան» ՓԲԸ	Թիվ ՊՎ-183, 2012թ. նոյեմբերի 27
9. «Մեգո Գոլդ» ՍՊԸ	Թիվ ՊՎ-184, 2012թ. դեկտեմբերի 28
10. «ԳեոՊրո Մայնինգ Գոլդ» ՍՊԸ	Թիվ ՊՎ-189, 2012թ. հոկտեմբերի 20
11. «Վարդանի գարթնքը» ՍՊԸ	Թիվ ՊՎ-239, 2012թ. սեպտեմբերի 27
12. «Լիդիան Արմենիա» ՓԲԸ	Թիվ ՊՎ-245, 2012թ. սեպտեմբերի 26
13. «Լիճքվագ» ՓԲԸ	Թիվ ՊՎ-293, 2012թ. նոյեմբերի 22
14. «Ագարակի ՊՄԿ» ՓԲԸ	Թիվ ՊՎ-311, 2013թ. ապրիլի 5
15. «Ասսաթ» ՍՊԸ	Թիվ ՊՎ-366, 2013թ. հունիսի 6
16. «Վայք Գոլդ» ՍՊԸ	Թիվ Պ-371, 2012թ. նոյեմբերի 30
17. «Թեղուտ» ՓԲԸ	Թիվ ՊՎ-376, 2013թ. փետրվարի 20
18. «Մարջան Մայնինգ Զոմփանի» ՍՊԸ	Թիվ ՊՎ-398, 2013թ. մարտի 7
19. «Թաթսթոուն» ՍՊԸ	Թիվ Պ-458, 2013թ. փետրվարի 11
20. «ԱՏ Մետալս» ՍՊԸ	Թիվ Պ-459, 2013թ. փետրվարի 11
21. «ԱՏ Մետալս» ՍՊԸ	Թիվ Պ-514, 2015թ. հունվարի 16
22. «Բակտեկ Էկո» ՍՊԸ	Թիվ Պ-515, 2014թ. օգոստոսի 22
23. «Գեդի Գոլդ» ՍՊԸ	Թիվ Պ-544, 2016թ. հուլիսի 22
24. «Մուլտի Գրուպ» Կոնցեռն ՍՊԸ	Թիվ ՊՎ-213, 2012թ. հոկտեմբերի 20
25. «Չանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	Թիվ ՊՎ-232, 2012թ. նոյեմբերի 27
26. «Ակտիվ լեռնագործ» ՍՊԸ	Թիվ ՊՎ-425, 2012թ. դեկտեմբերի 28
27. «Ղարազուլյաններ» ՓԲԸ	Թիվ Պ-547, 2016թ. հոկտեմբերի 25

ՄԵՏԱՂԱԿԱՆ ՀԱՆՔԱՔԱՐԻ ՀԵՏԱԽՈՒՉՈՒՄԸ, ԱՐԴՅՈՒՆԱՅԱՆՈՒՄԸ ԵՎ ԻՐԱՑՈՒՄԸ


| Մետաղական հանքաքարերի հաստատված պաշարները ըստ մարզերի, հազար տոննա



Աղբյուրը՝ Տեղեկատվությունը տրամադրվել է ՏԿԵՆ կողմից ԱՃԹՆ-ի զեկույցի համար

ՄԵՏԱՂԱԿԱՆ ՀԱՆՔԱՔԱՐԻ ՀԵՏԱԽՈՒՉՈՒՄԸ, ԱՐԴՅՈՒՆԱՅԱՆՈՒՄԸ ԵՎ ԻՐԱՑՈՒՄԸ


| Ընդամենը 2018թ. արտադրությունը ըստ մարզերի, դրամական արտահայտությամբ, մյլն ՀՀ դրամ



Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ «Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը» հրապարակումը համապատասխան տարիների համար: Տե՛ս https://www.armstat.am/file/article/marzer_2018_11.pdf էջեր 35-43

ՄԵՏԱՂԱԿԱՆ ՀԱՆՔԱՔԱՐԻ ՀԵՏԱԽՈՒՉՈՒՄԸ, ԱՐԴՅՈՒՆԱՅԱՆՈՒՄԸ ԵՎ ԻՐԱՑՈՒՄԸ

2018թ. մետաղական հանքարդյունաբերության ոլորտի արտադրած հիմնական արտադրատեսակները և դրանց մասնաբաժինը դրամական արտահայտությամբ



	Պղնձի խտանյութ	335,420 թմտ	110,303 մլն ՀՀ դրամ
	Ռսկու և արծաթի դորե համաձուլվածք	4.6 տոննա	58,611 մլն ՀՀ դրամ
	Ֆեռոմոլիբդեն	7,183 տոննա	39,813 մլն ՀՀ դրամ
	Ցինկի հանքաքարեր և խտահանքեր	12,188 թմտ	9,576 մլն ՀՀ դրամ
	Տուրքի խտանյութ	738 թմտ	2,406 մլն ՀՀ դրամ
	Ռսկու պարունակությամբ թանկարժեք մետաղի խտանյութ	2,886 տոննա	1,649 մլն ՀՀ դրամ

Աղբյուրը՝ Տեղեկատվությունը տրամադրվել է ընդերքօգտագործող ընկերությունների կողմից ԱԾԹՆ գեկուլցի համար

ՄԵՏԱՂԱԿԱՆ ՀԱՆՔԱՔԱՐԻ ՀԵՏԱԽՈՒՉՈՒՄԸ, ԱՐԴՅՈՒՆԱՅԱՆՈՒՄԸ ԵՎ ԻՐԱՑՈՒՄԸ


2018թ. մետաղական հանքարդյունաբերության ոլորտի արտադրած հիմնական արտադրատեսակները, դրանց ծավալը և արժեքը ըստ ընդերքօգտագործող ընկերությունների

1- «Վայք Գոլդ» ՍՊԸ	 Ոսկու պարունակությամբ թանկարժեք մետաղի խտանյութ	5,5 տոննա	0,69 մլն դրամ
2- «Մեղրածոր Գոլդ» ՍՊԸ	 Ոսկու պարունակությամբ թանկարժեք մետաղի խտանյութ	2,881 տոննա	1,580 մլն դրամ
3- «ԳեոՊրոՄայնինգ Գոլդ» ՍՊԸ	 Ոսկու և արծաթի դորե համաձուլվածք	4,602,155 գրամ	58,611 մլն դրամ
4- «Ախթալայի լեռնահարստացման կոմբինատ» ՓԲԸ	 Պղնձի խտանյութ	13,956 թմտ	4,771 մլն դրամ
5- «Թեղուտ» ՓԲԸ	 Պղնձի խտանյութ	3,435 թմտ	2,156 մլն դրամ
6- «Թեղուտ» ՓԲԸ	 Մոլիբդենի խտանյութ	62 թմտ	228 մլն դրամ
7- «Չանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	 Պղնձի խտանյութ	269,919 թմտ	65,700 մլն դրամ
8- «Չանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	 Ֆեռոմոլիբդեն	7,183 տոննա	39,813 մլն դրամ
9- «Ագարակի Պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	 Պղնձի խտանյութ	38,212 թմտ	15,728 մլն դրամ
10- «Ագարակի Պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	 Մոլիբդենի խտանյութ	676 թմտ	2,178 մլն դրամ
11- «Չաարատ Կապան» ՓԲԸ	 Ոսկու պարունակությամբ պղնձի խտանյութ	9,898 թմտ	21,948 մլն դրամ
12- «Չաարատ Կապան» ՓԲԸ	 Ցինկի խտանյութ	12,188 թմտ	9,576 մլն դրամ

Աղբյուրը՝ Տեղեկությունները տրամադրվել են ընդերքօգտագործող ընկերությունների կողմից ԱՃԹՆ զեկույցի համար


ՄԵՏԱՂԱԿԱՆ ՀԱՆՔԱՔԱՐԻ ՀԵՏԱԽՈՒԶՈՒՄԸ, ԱՐԴՅՈՒՆԱՅԱՆՈՒՄԸ ԵՎ ԻՐԱՑՈՒՄԸ

| Մետաղական արտադրատեսակների արտահանումը բնեղեն արտահայտությամբ, հազար տոննա



Աղբյուրը՝ ITC հաշվարկները, որոնք հիմնված են ՄԱԿ-ի COMTRADE վիճակագրության վրա

| 2018թ.-ին պղնձի խտանյուղի արտադրությունը ըստ ընկերությունների



Աղբյուրը՝ Տեղեկատվությունը տրամադրվել է ընդերքօգտագործող ընկերությունների կողմից ԱԾԹՆ գեկույցի համար

ՄԵՏԱՂԱԿԱՆ ՀԱՆՔԱՔԱՐԻ ՀԵՏԱԽՈՒՉՈՒՄԸ, ԱՐԴՅՈՒՆԱՅԱՆՈՒՄԸ ԵՎ ԻՐԱՑՈՒՄԸ

| 2018թ.-ին պղնձի խտանյուրթի ներքին իրացման ծավալները և դրամական արժեքը

Ընդերքօգտագործող ընկերությունը	Ծավալը	Վճարվող համարվող մետաղների պարունակությունը	Ընդամենը իրացման արժեքը, մլն ՀՀ դրամ	Գնորդ կազմակերպություն
«Թեղուտ» ՓԲԸ	4,173 թմտ	պղինձ - 933 տոննա	2,851	«Արմենիան Թափրո Փրոգրամ» ՓԲԸ
«Չանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	2,426 թմտ	պղինձ - 507 տոննա	1,447	«Ախթալայի լեռնահարստացման կոմբինատ» ՓԲԸ

Աղբյուրը՝ Տեղեկատվությունը տրամադրվել է ընդերքօգտագործող ընկերությունների կողմից ԱՃԹՆ-ի զեկույցի համար

2018թ.-ին պղնձի խտանյուրթի արտահանման բաշխումն ըստ ընկերությունների, ծավալի, դրամային արժեքի և արտահանման երկրի



«Ախթալայի լեռնահարստացման կոմբինատ»	 Բուլղարիա	13,899 թմտ	6,602 մլն ՀՀ դրամ	13,699 հազար ԱՄՆ դոլար
«Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	 Չինաստան	38,351 թմտ	19,977 մլն ՀՀ դրամ	41,358 հազար ԱՄՆ դոլար
«Չանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	 Չինաստան, Ռումինիա, Բուլղարիա	264,370 թմտ	147,612 մլն ՀՀ դրամ	305,596 հազար ԱՄՆ դոլար
«Չաարատ Կապան» ՓԲԸ	 Շվեյցարիա	9,483 թմտ	22,053 մլն ՀՀ դրամ	45,665 հազար ԱՄՆ դոլար
Ընդհանուր		326,103 թմտ	196,244 մլն ՀՀ դրամ	406,278 հազար ԱՄՆ դոլար


Աղբյուրը՝ ITC հաշվարկները, որոնք հիմնված են ՄԱԿ-ի COMTRADE վիճակագրության վրա

ՄԵՏԱՂԱԿԱՆ ՀԱՆՔԱՔԱՐԻ ՀԵՏԱԽՈՒՉՈՒՄԸ, ԱՐԴՅՈՒՆԱՅԱՆՈՒՄԸ ԵՎ ԻՐԱՑՈՒՄԸ

| 2018թ.-ին մոլիբդենի խտանյուղի և ֆեռոմոլիբդենի արտադրությունը ըստ ընկերությունների

Ընկերության անվանումը	Ընկերության գործունեության համայնքը	Ծավալը	Արժեքը, մլն ՀՀ դրամ
<i>Մոլիբդենի խտանյուղ, թմտ</i>			
«Թեղուտ» ՓԲԸ	ՀՀ, Լոռու մարզ, Թեղուտ	62 թմտ	228
«Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	ՀՀ, Սյունիքի մարզ, Ագարակ	676 թմտ	2,178
<i>Ֆեռոմոլիբդեն, տոննա</i>			
«Չանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	ՀՀ, Սյունիքի մարզ, Զաչարան	7,183 տոննա	39,813

| 2018թ.-ին մոլիբդենի խտանյուղի և ֆեռոմոլիբդենի արտահանման բաշխումն ըստ ընկերությունների, ծավալի, դրամային արժեքի և արտահանման երկրի



ՄԵՏԱՂԱԿԱՆ ՀԱՆՔԱՔԱՐԻ ՀԵՏԱԽՈՒՉՈՒՄԸ, ԱՐԴՅՈՒՆԱՅԱՆՈՒՄԸ ԵՎ ԻՐԱՑՈՒՄԸ

| 2018թ.-ին ցինկի արտադրությունն ըստ ընկերությունների

Ընկերության անվանումը	Ընկերության գործունեության համայնքը	Ծավալը	Արժեքը, մլն ՀՀ դրամ
«Զաարատ Կապան» ՓԲԸ	Սյունիքի մարզ, Կապան	12,188 թմտ	9,576

| 2018թ.-ին ցինկի արտահանման բաշխումն ըստ ընկերությունների, ծավալի, դրամային արժեքի և արտահանման երկրի



Աղբյուրը՝ Տեղեկատվությունը տրամադրվել է ընդերքօգտագործող ընկերությունների կողմից ԱԾԹՆ զեկույցի համար

ՄԵՏԱՂԱԿԱՆ ՀԱՆՔԱՔԱՐԻ ՀԵՏԱԽՈՒՉՈՒՄԸ, ԱՐԴՅՈՒՆԱՅԱՆՈՒՄԸ ԵՎ ԻՐԱՑՈՒՄԸ

| 2018թ.-ին ցինկի արտադրությունն ըստ ընկերությունների

Ընկերության անվանումը	Ընկերության գործունեության համայնքը	Արտադրատեսակը	Ծավալը տոննա	Արժեքը, մլն ՀՀ դրամ
«ԳեոՊրոՄայնինգ Գոլդ» ՍՊԸ	Գեղարքունիքի մարզ, Գեղամասար	Ոսկու և արծաթի դորե համաձուլվածք	4.6	58,611
«Մեդրաձոր Գոլդ» ՍՊԸ	Կոտայքի մարզ, Մեդրաձոր	Ոսկու պարունակությամբ թանկարժեք մետաղի խտանյութ	2,881	1,580
Վայք Գոլդ ՍՊԸ	Վայոց Ձորի մարզ, Ագատեկ	Ոսկու պարունակությամբ թանկարժեք մետաղի խտանյութ	5.5	0.69

2018թ.-ին արտահանման բաշխումն ըստ ընկերությունների, ծավալի, դրամային արժեքի և արտահանման երկրի

Ծագման մարզը	Ընկերության անվանումը	Արտադրատեսակի անվանումը	Արտահանման երկիրը	Ծավալը, տոննա	Արժեքը, մլն ՀՀ դրամ	Արժեքը, հազար ԱՄՆ դոլար
Կոտայքի մարզ	«Մեդրաձոր Գոլդ» ՍՊԸ	Ոսկու պարունակությամբ թանկարժեք մետաղի խտանյութ	Շվեյցարական Համադաշնություն	2,828	1,575	3,262
Գեղարքունիքի մարզ	«ԳեոՊրոՄայնինգ Գոլդ» ՍՊԸ	Ոսկու և արծաթի դորե համաձուլվածք	Շվեյցարական Համադաշնություն	4.6	78,260	162,019

Աղբյուրը՝ Տեղեկատվությունը տրամադրվել է ընդերքօգտագործող ընկերությունների կողմից ԱՃԹՆ գեկույցի համար

ՄԵՏԱՂԱԿԱՆ ՀԱՆՔԱՔԱՐԻ ՀԵՏԱԽՈՒՉՈՒՄԸ, ԱՐԴՅՈՒՆԱՅԱՆՈՒՄԸ ԵՎ ԻՐԱՑՈՒՄԸ


2018թ.-ին ոսկու համաձուլվածքի և ոսկու պարունակությամբ թանկարժեք մետաղի խտանյութի ներքին իրացման բաշխումն ըստ ընկերությունների, ծավալի, դրամային արժեքի և գնորդ կազմակերպությունների

Ընդերքօգտագործող ընկերությունը	«Մեդրաձոր գոլդ» ՍՊԸ	«Վայք գոլդ» ՍՊԸ	«Լիճքվազ» ՓԲԸ
Արտադրատեսակը	Ոսկու պարունակությամբ թանկարժեք մետաղի խտանյութ	Ոսկու պարունակությամբ թանկարժեք մետաղի խտանյութ	Ոսկի, արծաթ և պղինձ պարունակող հանքաքար
Չափման միավորը	տոննա	կգ	տոննա
Ծավալը	16.6	5,500	40,031
Վճարվող համարվող մետաղների պարունակությունը արտադրատեսակի ծավալում	ոսկի – 373.5 մգ	ոսկի – 110 կգ	46.1 կգ ոսկի
Ընդամենը իրացման արժեքը, մլն ՀՀ դրամ	4.8	0.688	881
Գնորդ կազմակերպություն	«Ասսաթ» ՍՊԸ	«Ասսաթ» ՍՊԸ	«Չաարատ Կապան» ՓԲԸ

Աղբյուրը՝ Տեղեկությունները տրամադրվել են ընդերքօգտագործող ընկերությունների կողմից ԱԾԹՆ զեկույցի համար

ՄԵՏԱՂԱԿԱՆ ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՆԵՐԴՐՈՒՄԸ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵՉ

Մետաղական հանքարդյունաբերության ոլորտի համախառն ավելացված արժեքը և դրա մասնաբաժինը ՀՆԱ-ում



Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ ազգային հաշիվների վիճակագրություն S՝ես https://armstat.am/file/article/sv_03_20a_112.pdf


ՄԵՏԱՂԱԿԱՆ ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՆԵՐԴՐՈՒՄԸ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅՈՒՆ

| Աշխատողների բաշխվածությունը ըստ սեռի, քաղաքացիության և պայմանագրի ժամկետայնության

Ընդամենը: 9,791




2018թ. մետաղական հանքարդյունաբերության ոլորտում զբաղվածների տոկոսային տեղաբաշխումը ըստ մարզերի և մայրաքաղաքի




Աղբյուրը՝ Տեղեկությունները տրամադրվել են ընդերքօգտագործող ընկերությունների կողմից ԱՃԹՆ գեկույցի համար

ՄԵՏԱՂԱԿԱՆ ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՆԵՐԴՐՈՒՄԸ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Ընդերքօգտագործող ընկերությունների կողմից 2018թ. պետական բյուջե կատարած ներդրումը




2018թ. ընդերքօգտագործող ընկերությունների կողմից պետական բյուջեի նկատմամբ հաշվարկված հարկերը և վճարները, մլն ՀՀ դրամ




Աղբյուրը՝ Տեղեկությունները տրամադրվել են ՀՀ ՊԵԿ և ՇՄՆ կողմից ԱԾԹՆ զեկույցի համար

ՄԵՏԱՂԱԿԱՆ ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՆԵՐԴՐՈՒՄԸ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵՉ

2018թ ընդերքօգտագործող ընկերությունների պետական բյուջեի նկատմամբ հաշվարկված հարկերը և վճարները, մլն ՀՀ դրամ



Ընդերքօգտագործող ընկերությունների կողմից 2018թ-ին հաշվարկված հարկերից և վճարներից համայնքների եկամուտները՝ ըստ հոսքերի կառուցվածքի և դրամական արտահայտությամբ




Աղբյուրը՝ Տեղեկությունները տրամադրվել են ՀՀ ՊԵԿ և ՇՄՆ կողմից ԱՃԹՆ զեկույցի համար

ՄԵՏԱՂԱԿԱՆ ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՆԵՐԴՐՈՒՄԸ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ

2018թ.-ին համայնքային բյուջեների եկամուտները ընդերքօգտագործող ընկերությունների կողմից հաշվարկված հարկերից և վճարներից՝ ըստ առաջատար համայնքների


Ընդամենը՝ 1,172՝ մլն ՀՀ դրամ
Այլ՝ 52՝ մլն ՀՀ դրամ



Աղբյուրը՝ Տեղեկությունները տրամադրվել են ՀՀ ՏԿԵՆ կողմից ԱՃԹՆ զեկույցի համար

ՄԵՏԱՂԱԿԱՆ ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՆԵՐԴՐՈՒՄԸ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ


2018թ.-ին ընդերքօգտագործող ընկերությունների կողմից համայնքային բյուջեների նկատմամբ հաշվարկված բոլոր վճարումները, մլն ՀՀ դրամ



Աղբյուրը՝ Տեղեկությունները տրամադրվել են ՀՀ ՏԿԵՆ կողմից ԱՃԹՆ գեկույցի համար

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԾԱԽՍԵՐԸ

Ընդերքօգտագործման պայմանագրով սահմանված՝ 2018թ. համայնքներում սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտում ստանձնած պարտավորությունների փաստացի կատարված վճարումները




Ընդհանուր՝ 132,952,400

Աղբյուրը՝ Տեղեկատվությունը տրամադրվել է ՏԿԵՆ կողմից ԱՃԹՆ-ի հաշվետվության համար


ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԾԱԽՍԵՐԸ

2018թ. ընդերքօգտագործող ընկերությունների կողմից համայնքին կատարած բարեգործական հատկացումները, նվիրատվությունները կամ այլ ձևով համայնքին կատարված անհատույց օտարումները, 33 դրամ



Աղբյուրը՝ Տեղեկատվությունը տրամադրվել է ընդերքօգտագործող ընկերությունների կողմից ԱՃԹՆ գեկույցի համար


2018թ. Ընդերքօգտագործող ընկերությունների կողմից ոչ առևտրային իրավաբանական անձանց և ֆիզիկական անձանց տրամադրված նվիրատվությունները, նվիրաբերությունները կամ այլ ձևով կատարված անհատույց օտարումները, 33 դրամ




Աղբյուրը՝ Տեղեկատվությունը տրամադրվել է ընդերքօգտագործող ընկերությունների կողմից ԱՃԹՆ գեկույցի համար

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԾԱԽՍԵՐԸ


2018թ. Հասարակական կազմակերպություններին կատարված նվիրատվություններ ըստ ընդերքօգտագործող ընկերությունների, ՀՀ դրամ



2018թ. հիմնադրամներին կատարված նվիրատվություններ՝ ըստ հանքարդյունահանող ընկերությունների, ՀՀ դրամ




2018թ. ֆիզիկական անձանց կատարված նվիրատվություններ՝ ըստ ընդերքօգտագործող ընկերությունների, ՀՀ դրամ



Աղբյուրը՝ Տեղեկությունները տրամադրվել են ընդերքօգտագործող ընկերությունների կողմից ԱՃԹՆ գեկույցի համար

ԲՆԱՊԱՅՊԱՆԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ


«Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ 2018թ.-ի ընթացքում ազդակիր համայնքներին հատկացված սուբվենցիաները բնապահպանական և առողջապահական ծրագրերի իրականացնելու համար՝



Աղբյուրը՝ Տեղեկատվությունը տրամադրվել է ՀՄՆ կողմից՝ ԱՃԹՆ-ի զեկույցի պատրաստման համար

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ


«Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ 2018թ.-ի ընթացքում ազդակիր համայնքներին հատկացված սուբվենցիաները բնապահպանական և առողջապահական ծրագրերի իրականացնելու համար՝



Աղբյուրը՝ Տեղեկատվությունը տրամադրվել է ՀՄՆ կողմից՝ ԱԾԹՆ-ի զեկույցի պատրաստման համար

ՀԱՄԱԴՐՈՒՄ

2018թ. պետական և տեղական բյուջեների էական եկամուտների հոսքերի համադրման արդյունքները ըստ տեսակների



Տրամադրված պետական մարմնի կողմից

Տրամադրված ընկերությունների կողմից


Անհամապատասխանություն

Աղբյուրը՝ Համաձայն ԱՃԹՆ շրջանակներում տրամադրված հաշվետվությունների

ՀԱՄԱԴՐՈՒՄ

2018թ. պետական և տեղական բյուջեների էական եկամուտների հոսքերի համադրման արդյունքները ըստ տեսակների

Վերջնական տվյալներ, հազար ՀՀ դրամ



Աղբյուրը՝ Համաձայն ԱԾԹՆ շրջանակներում տրամադրված հաշվետվությունների

40 ՀԱՐՑ ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆ

1. **Ի՞նչ է Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնությունը (ԱՃԹՆ):**

Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնությունը (ԱՃԹՆ) բնական պաշարների բաց և հաշվետու կառավարումը խթանող համաշխարհային ստանդարտ է:

2. **Ինչու՞ է անհրաժեշտ ԱՃԹՆ-ը:**

ԱՃԹՆ-ի նպատակը ավելի թափանցիկ և հաշվետվողական պետական և գործարար համակարգերի ստեղծումն է, ինչպես նաև հանրային երկխոսության կայացման խթանումը՝ դրանով իսկ երաշխավորելով կողմերի միջև փոխըմբռնումը:

3. **Ի՞նչ է ԱՃԹՆ վավերացումը:**

ԱՃԹՆ իրականացնող յուրաքանչյուր երկիր ԱՃԹՆ-ի թեկնածու դառնալուց հետո երկուսուկես տարվա ընթացքում և երեք տարին մեկ անգամ պետք է անցնի վավերացման գործընթաց: Վավերացումը թույլ է տալիս գնահատել երկրի առաջընթացը ԱՃԹՆ-ի պահանջներից յուրաքանչյուրին համապատասխանության ապահովման առումով:

4. **Ո՞րն է բազմաշահառու խմբի (ԲԸԽ) դերը:**

ԲԸԽ-ն ԱՃԹՆ-ի շրջանակներում որոշումներ ընդունող հիմնական մարմինն է՝ կառավարության, ընկերությունների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներից կազմված:

5. **Որո՞նք են ԳՅ ԱՃԹՆ -ի ընթացիկ առաջնահերթությունները:**

- Հանքարդյունաբերության ոլորտի վերաբերյալ իրազեկվածության ապահովում,
- Հանքարդյունաբերության ոլորտի վերաբերյալ թափանցիկության և հաշվետվողականության բարձրացում, թափանցիկության և հաշվետվողականության ստանդարտի տարածում Գայաստանի ԱՃԹՆ-ի շրջանակի ընդլայնման միջոցով,
- Պատասխանատու հանքարդյունաբերության մշակույթի կատարելագործում՝ միջազգային լավագույն փորձի կիրառման, իրավական կարգավորումների բարելավման միջոցով,
- Պատասխանատու ներդրողների համար մրցակցային ներդրումային միջավայրի բարելավում,
- Ոլորտի շահառուների ինստիտուցիոնալ կարողությունների զարգացում, ոլորտի տվյալների համակարգային բացահայտման մշակույթի ամրապնդում:

6. **Ո՞րն է 2018թ. համար Գայաստանի ԱՃԹՆ շրջանակը:**

ԳՅ ԱՃԹՆ ԲԸԽ-ի 2019թ. ապրիլի 16-ի նիստի արդյունքում սահմանվել է, որ ԳՅ ԱՃԹՆ երկրորդ զեկույցը պետք է կազմվի 2018 ֆինանսական տարվա համար, ԱՃԹՆ հրապարակային հաշվետվություն են ներկայացնելու մետաղական օգտակար հանածոյի արդյունահանման թուլյություն ստացած բոլոր ընկերությունները, բացառությամբ սնանկ ճանաչվածների, և ԳՅ ՊԵԿ, ԳՅ շրջակա միջավայրի նախարարությունը ԳՅ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը:

7. **Ու՞մ է պատկանում ընդերքը Գայաստանի Հանրապետությունում:**

Ընդերքը Գայաստանի Հանրապետության բացառիկ սեփականությունն է:

8. **Ի՞նչ է նշանակում ընդերքօգտագործում:**

Ընդերքօգտագործում նշանակում է երկրաբանական ուսումնասիրությունների, օգտակար հանածոների արդյունահանման նպատակներով ընդերքի օգտագործում կամ ընդերքօգտագործման թափոնների վերամշակում:

9. Ովքե՞ր կարող են զբաղվել ընդերքօգտագործմամբ:

Ընդերքօգտագործմամբ կարող են զբաղվել իրավաբանական անձինք, այդ թվում՝ օտարերկրյա պետության առևտրային կազմակերպությունները:

10. Որո՞նք են ընդերքօգտագործման ձևերը:

Ընդերքը կարող է օգտագործվել՝ (i) երկրաբանական ուսումնասիրությունների նպատակով կամ (ii) օգտակար հանածոների արդյունահանման նպատակով:

11. Ի՞նչ է նշանակում երկրաբանական ուսումնասիրություն:

Երկրաբանական ուսումնասիրությունները ընդերքի երկրաբանական աշխատանքների համալիր են, որի նպատակն է ուսումնասիրել երկրակեղևի կառուցվածքը, ապարների առաջացման պայմանները, արտածին երկրաբանական պրոցեսները, հրաբխային գործունեությունը, ինչպես նաև հայտնաբերել ու գնահատել կամ վերագնահատել օգտակար հանածոների պաշարները:

12. Որո՞նք են ընդերքօգտագործման ոլորտում լիազորված պետական մարմինները:

Ընդերքօգտագործման ոլորտը կարգավորվում և վերահսկվում է մի շարք պետական և տեղական մարմինների, ինչպես նաև պետական ոչ առևտրային կազմակերպությունների կողմից, սակայն որպես առանցքային լիազոր մարմիններ պետք է առանձնացնել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը և ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունը:

13. Ի՞նչ իրավական հիմքերով է տրամադրվում ընդերքօգտագործման իրավունքը (պահանջ 2.3) :

Ընդերքօգտագործման իրավունքը տրամադրում է ընդերքօգտագործման թույլտվության կամ համաձայնության, լեռնահատկացման ակտի, ինչպես նաև ընդերքօգտագործողի հետ ընդերքօգտագործման պայմանագրի կնքման միջոցով:

14. Կա՞ն արդյոք այդպիսի տարածքներ, որոնց նկատմամբ ընդերքօգտագործումն արգելվում է:

Այո, ընդերքի առանձին տեղամասերի օգտագործումն արգելվում է, եթե հայցվող ընդերքի տեղամասի վրա գտնվող հողամասում կան գերեզմաններ, բնության, պատմության և մշակույթի հուշարձաններ, ՀՀ կարմիր գրքում գրանցված բույսեր կամ կենդանիների բնակատեղիներ, ինչպես նաև եթե տվյալ տարածքով անցնում են կենդանիների միգրացիոն ուղիներ: Ընդերքօգտագործումը բնության հատուկ պահպանվող տարածքներում կարող է իրականացվել միայն Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի օրենսդրությամբ սահմանված կարգով:

15. Արդյո՞ք հրապարակային է ընդերքօգտագործման հետ կապված գործունեությունը: Եթե այո, ապա ո՞ր տեղեկություններն են հրապարակայնորեն հասանելի և ինչպե՞ս կարելի է դրանց ծանոթանալ :

Այո, հրապարակային է: Հրապարակման ենթակա տեղեկությունների ցանկը սահմանված է ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 9-րդ հոդվածում և տեղեկությունները հասանելի են ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պաշտոնական ինտերնետային կայքում՝ <http://www.mtad.am/hy/mtad26.12.4/> և Հայաստանի ԱԾԹՆ-ի պաշտոնական կայքում՝ www.eiti.am:

16. Ի՞նչ է նշանակում շրջակա միջավայրի վրա ազդեցություն:

Շրջակա միջավայրի վրա ազդեցություն է համարվում նախատեսվող գործունեության իրականացման հետևանքով շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա հնարավոր փոփոխությունները:

17.

Արդյո՞ք ընդերթօզագործումը վճարովի է, և, եթե այո, ապա որո՞նք են ընդերթօզագործման վճարները:

Այո, ընդերթօզագործումը վճարովի է: Ընդերթն օգտագործելիս կատարվում են հետևյալ վճարները՝ բնապահպանական հարկ, ռեկուլտիվացիոն վճարներ, մշտադիտարկումների իրականացման վճարներ, բնօգտագործման վճարներ, այդ թվում նաև ռոյալթի, ընդերթօզագործման թույլտվությունների տրամադրման պետական տուրք:

18.

Ի՞նչ է ռոյալթին:

Ռոյալթին **ՀՀ** պետական բյուջե վճարվող վճար է, որը կատարվում է մետաղական օգտակար հանածոների օգտագործումը փոխհատուցելու նպատակով, ինչպես նաև մետաղական օգտակար հանածոների և դրանց կամ ընդերթօզագործման թափոնների վերամշակման արդյունքում ստացված արտադրանքի օտարումից ստացվող շահույթաբերության համար:

19.

Ի՞նչ է նշանակում իրական սեփականատեր:

Ընդհանուր առմամբ, իրական սեփականատեր է համարվում այն ֆիզիկական անձը, որը մասնակցում կամ վերահսկում է իրավաբանական անձի կանոնադրական կապիտալը, կամ իրավաբանական անձի տարեկան հասույթից բաժին ստանալու կամ կառավարման մարմիններում ներգրավված անձանց նշանակելու կամ ազատելու իրավունք ունի:

20.

Ո՞րն է իրական սեփականատերերի բացահայտման նպատակը (պահանջ 2.5)

Իրական սեփականատերերի վերաբերյալ տեղեկատվության հասանելիությունը հարկերից խուսափելու, փողերի լվացման և կոռուպցիոն հանցագործությունների դեմ արդյունավետ պայքարի միջոցներից մեկն է:

21.

Որո՞նք են վերջին տասնամյակում **ՀՀ -ում հաստատված հիմնական մետաղական օգտակար հանածոների պաշարները:**

2010-2018թթ. ընթացքում **ՀՀ** տարածքում հաստատված պաշարների ամենամեծ ծավալը բաժին է ընկնում երկաթին, այնուհետև ոսկուն, մագնեզիումին, պղնձին և բորմիտին: Առկա են այնպիսի մետաղների հաշվեկշռային պաշարներ, ինչպիսիք են ցինկը, կապարը և մոլիբդենը:

22.

Ինչպե՞ս են տեղաբաշխված հաստատված մետաղական հանքաքարերի պաշարները **ՀՀ մարզերով:**

Լոռու մարզը՝ ի համեմատ այլ մարզերի, ունի օգտակար հանածոների հաստատված ամենամեծ պաշարները, որոնց հիմնական բաղադրիչը երկաթն է (երկաթի հաստատված հաշվեկշռային պաշարների 100%): **Հաջորդը** Սյունիքն է, որտեղ տեղակայված են ոսկու հաստատված հաշվեկշռային պաշարների 42%-ը և պղնձի պաշարների 100%-ը: Երրորդ մարզը **Վայոց Ձորն** է, որտեղ գտնվում է ոսկու 2010-2018թթ-ին հաստատված պաշարների 11%-ը:

23.

Քանի՞ մետաղական հանք կա **ՀՀ-ում:**

Ըստ ՏԿԵՆ տվյալների՝ օգտակար հանածոների հանքավայրերի պետական կադաստրում հաշվառված է հաստատված պաշարով օգտակար հանածոների շուրջ 871 հանքավայր, ներառյալ՝ 42 մետաղական հանքավայր: Մետաղական օգտակար հանածոների թվում առկա են 7 պղնձամոլիբդենային, 4 պղնձի, 24 ոսկու և ոսկի-բազմամետաղային, 2 բազմամետաղային, 1 մոլիբդենային, 1 այլումինահանքային, 1 մագնեզիումասիլիկատային ապարների և բորմիտի, և 3 երկաթահանքային հանքավայրեր:

24.

Որո՞նք են մետաղական հանքարդյունաբերության **ՀՀ առաջատար մարզերը:**

Մետաղական հանքարդյունաբերության ոլորտի արդյունքի մեծ մասը ստեղծվել է Սյունիքի մարզում, որն ավանդաբար հանդիսանում է հանքարդյունաբերական ոլորտում առաջատար՝ 2018թ.-ին շուրջ 86% մասնաբաժնով: **Հաջորդը** Գեղարքունիքի մարզն է, որին 2018 թ.-ին բաժին է ընկել ամբողջ մետաղական հանքարդյունաբերության ոլորտի արտադրանքի 6.3%-ը: **Հարկ է նշել**, որ Լոռու մարզի ներդրումը հանքարդյունաբերության ոլորտում զգալի նվազել է 2018թ.-ին՝ կազմելով ամբողջ ոլորտի արտադրանքի 2%-ը:

25. Ո՞րն է մետաղական արդյունահանման մեջ գերակշռող հանքաքարը մետաղական հանքարդյունաբերության ոլորտում (պահանջ 3.2):

Համաձայն ընդերքօգտագործող ընկերությունների կողմից տրամադրված տեղեկությունների՝ 2018թ. ընթացքում մետաղական հանքարդյունաբերության ոլորտի արդյունահանման մեջ գերակշռում է պղնձի կամ պղինձ-մոլիբդենային հանքաքարը՝ կազմելով շուրջ 25 միլիոն տոննա, որից արտադրվել է պղնձի և մոլիբդենի խտանյութ և ֆեռոմոլիբդեն:

26. Որքա՞ն է մետաղական հանքարդյունաբերության մասնաբաժինը ՀՀ արտահանման մեջ (պահանջ 3.3):

Համաձայն ՄԱԿ-ի COMTRADE վիճակագրության, մետաղական հանքարդյունաբերության ոլորտի մասնաբաժինը ՀՀ ընդհանուր արտահանման մեջ 2018թ. կազմել է 35,9 % (856.4 մլն ԱՄՆ դոլար) գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը 7.9%-ով: Դրանից 22 %-ը բաժին է ընկել պղնձի խտանյութին, 4 %-ը՝ ոսկուն, 5.3%-ը՝ ֆեռոմոլիբդենին, 0.9% -ը՝ ցինկի խտանյութին և 0.3%-ը՝ մոլիբդենի խտանյութին:

27. Որո՞նք են մետաղական հանքաքարերի արտահանման հիմնական ուղղությունները (պահանջ 3.3):

Ըստ ընդերքօգտագործող ընկերությունների տրամադրած տեղեկատվության՝ պղնձի արտահանման հիմնական ուղղությունը Բուլղարիան է՝ 2018թ.-ին պղնձի ընդհանուր արտահանման 41%-ով, հաջորդը Շվեյցարիան է (25%), որը 2018թ. իր մասնաբաժնով գերազանցել է Չինաստանին (18%): Կարևոր գործընկերների ցանկում է նաև Ռուսիային (10%): 2018թ.-ին մոլիբդենի խտանյութի արտահանման հիմնական գործընկերն էր Բելգիան (86%): ՀՀ-ից մոլիբդենի խտանյութ ներկրողների ցանկում ավելացել է ՌԴ-ն, որի մասնաբաժինը կազմել է 14%: Հաշվետու տարում ցինկ արտահանվել է միայն Բելգիա: 2018թ.-ին թանկարժեք մետաղների արտահանման հիմնական գործընկերը եղել է Շվեյցարիան, որի մասնաբաժինը կազմել է 96%:

28. Որքա՞ն մետաղական հանքաքար է իրացվել ներքին շուկայում:

Մետաղական հանքաքարերի և խտանյութի ներքին իրացումը 2018թ.-ին կազմել է 5.2 մլրդ ՀՀ դրամ կամ 10.7 մլն ԱՄՆ դոլար: Ինչպես արտահանման մեջ, այնպես էլ ներքին շուկայում, պղնձի իրացումը ավանդաբար զբաղեցրել է շուկայի գերակշիռ մասը՝ 83% մասնաբաժնով:

29. Ինչպիսի՞ սոցիալ-տնտեսական պարտավորություններ ունեն ընդերքօգտագործող ընկերությունները (պահանջ 6.1):

ՀՀ Ընդերքի մասին օրենսգիրքն արձանագրում է ընդերքօգտագործողների մի շարք սոցիալական պարտավորություններ: Դրանք են՝ հանքի փակման ծրագրով նախատեսված սոցիալական պարտավորությունները (աշխատուժի սոցիալական մեղմացման ծրագիրը) և ընդերքօգտագործման պայմանագրով համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտում ստանձնած պարտավորությունները:

30. Որքա՞ն են ընդերքօգտագործողի կողմից հանքարդյունահանման պայմանագրով սահմանված համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման հետ կապված պարտավորությունների կատարման փաստացի վճարները հաշվետու տարում. (պահանջ 6.1):

Համաձայն ՏԿԵՆ կողմից տրամադրված տեղեկատվության հաշվետու տարում ընդերքօգտագործող ընկերությունների կողմից համայնքներին պարտադիր սոցիալ-տնտեսական վճարումներ են կատարվել ընդհանուր 132,952,400 ՀՀ դրամի չափով: Հատկանշական է, որ ընդերքօգտագործող ընկերությունների կողմից համայնքներին կատարած կամավոր վճարումները կազմել են 2.7 մլրդ ՀՀ դրամ:

31. Ի՞նչ ազդեցություն ունի հանքարդյունաբերության ոլորտը ՀՀ տնտեսության վրա (պահանջ 6.3):

ՀՀ Վիճակագրական կոմիտեի տրամադրած տվյալների համաձայն՝ 2018թ.-ին մետաղական հանքարդյունաբերության ոլորտի մասնաբաժինը կազմել է ՀՆԱ-ի 2.9%-ը: 2013-2018թթ. ընթացքում անվանական ՀՆԱ-ն զգալիորեն աճել է, մինչդեռ մետաղական հանքարդյունաբերության ոլորտի համախառն ավելացված արժեքը շարունակել է տատանվել և աճել է 2013թ.-ին 103 մլրդ ՀՀ դրամից մինչև 173 մլրդ ՀՀ դրամ 2018թ. :

32. Որքա՞ն եկամուտ է ստացել պետությունը հաշվետու տարում մետաղական հանքարդյունաբերության ոլորտից (պահանջ 6.3)

ՊԵԿ-ի տրամադրած տեղեկատվության համաձայն՝ 2018թ.-ին ընդերքօգտագործող ընկերությունների կողմից պետական բյուջեի նկատմամբ հաշվարկված հարկերը և վճարները նախորդ տարվա նկատմամբ նվազել են 1.1%-ով՝ կազմելով 78.3 մլրդ դրամ կամ ընդհանուր եկամուտների 6%-ը:

33. Որո՞նք են պետբյուջե կատարած վճարումներով առաջատար ընդերքօգտագործող ընկերությունները:

2018թ.-ին պետական բյուջեի նկատմամբ հաշվարկված վճարումներով առաջատար ընկերությունն է «Չանգեզուրի պղնձամուլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ն, որին բաժին է ընկել ընդերքօգտագործող ընկերություններից բոլոր հաշվարկված վճարումների 54%-ը կամ 42.5 մլրդ ՀՀ դրամ: «ԳեոՊրոՄայնինգ Գոլդ» -ին բաժին է ընկել 2018թ.-ին բոլոր հաշվարկված վճարումների 19.9%-ը կամ 15.6 մլրդ ՀՀ դրամ: «Չաարատ Կապան» ՓԲԸ-ը բաժին է ընկել հանքարդյունաբերական ընկերությունների 2018թ. բոլոր վճարումների 8.3%-ը, իսկ դրամային արտահայտությամբ՝ 6.5 մլրդ ՀՀ դրամ:

34. Որքա՞ն են կազմել համայնքների եկամուտները ընդերքօգտագործող ընկերությունների կողմից կատարվող պարտադիր վճարներից և հարկերից:(պահանջ 6.3):

2018թ.-ին ընդերքօգտագործող ընկերությունների կողմից համայնքային բյուջեների նկատմամբ հաշվարկված հարկերը և վճարները նախորդ տարվա համեմատ նվազել են 200 մլն ՀՀ դրամով՝ կազմելով 1.1 մլրդ ՀՀ դրամ:

35. Որո՞նք են ընդերքօգտագործող ընկերությունների կողմից հարկերից և վճարներից եկամուտներ ստացած առաջատար համայնքները:

2018թ. Ջերմուկ համայնքը ընդերքօգտագործող ընկերություններից հաշվարկված հարկերից ու վճարներից ստացված եկամուտների չափով առաջատարներն է՝ կազմելով ընդհանուր վճարումների 15.8%-ը կամ 185 մլն դրամ: Զաջարանի խոշորացված համայնքին հաշվետու տարում բաժին է ընկել համայնքների ընդհանուր եկամուտների 14.3%-ը կամ 168 մլն դրամ՝ Կապան խոշորացված համայնքի եկամուտները կազմել են ընդհանուր եկամուտների 13.8%-ը կամ 162 մլն ՀՀ դրամ:

36. Որո՞նք են համայնքներ կատարած վճարումներով առաջատար ընդերքօգտագործող ընկերությունները:

Առաջատար ընկերությունը 2018թ. «Լիդիան Արմենիա» ՓԲԸ-ը, որին բաժին է ընկնում ընդերքօգտագործող ընկերությունների կողմից հաշվարկված վճարումների 37.4%-ը: «Չանգեզուրի պղնձամուլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի 2018թ.-ին հաշվարկված վճարումների բաժինը ընդերքօգտագործող ընկերությունների կողմից հաշվարկված վճարումներում կազմել է 15.4%, իսկ «Չաարատ Կապան» ՓԲԸ-ի հաշվարկված վճարումների մասնաբաժինը կազմել է 9.8%:

37. Որքա՞ն մարդ է աշխատում ՀՀ-ում մետաղական հանքարդյունաբերության ոլորտում 2018թ. (պահանջ 6.3):

Համաձայն ընդերքօգտագործող ընկերությունների կողմից ներկայացրած ԱՃԹՆ հաշվետվության՝ 2018թ. ոլորտում զբաղվածների թիվը կազմել է 9,791 մարդ՝ կազմելով ընդհանուր արդյունաբերության մեջ զբաղվածների 7.3%-ը:

38. Որքա՞ն է մետաղական հանքարդյունաբերության ոլորտում զբաղվածության մեջ կանանց մասնաբաժինը (պահանջ 6.3):

Ըստ ընդերքօգտագործող ընկերությունների ներկայացրած տվյալների, հաշվետու տարում մետաղական հանքարդյունաբերության ոլորտում կանայք կազմում են զբաղվածների միայն 18%-ը: Ներկայացված 26 ընկերություններից 12-ի ղեկավար կազմում ներկայացված է առնվազն մեկ կին: Ղեկավար կազմում տասից ավել կին ներկայացված է միայն երեք ընկերությունում, որոնք են՝ «Լիդիան Արմենիա» ՓԲԸ-ն, «Չանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ն և «Չաարատ Կապան» ՓԲԸ-ն: Ղեկավար կազմում ներկայացված կանանց ընդհանուր թիվը 88 է, որը կազմում է կին զբաղվածների շուրջ 5%-ը:

39. Մետաղական հանքարդյունաբերության բնապահպանական ազդեցության մոնիթորինգի ինչպիսի՞ մեխանիզմներ են գործում Հայաստանում (պահանջ 6.4):

Համաձայն ՀՀ կառավարության 2018թ. փետրվարի 22-ի թիվ 191-Ն որոշման՝ ընդերքօգտագործող ընկերությունները պարտավորվում են Շրջակա միջավայրի նախարարություն ներկայացնել եռամսյակային և տարեկան հաշվետվություններ շրջակա միջավայրի վրա ազդեցության մշտադիտարկումների արդյունքների մասին:

40. ՀՀ պետական բյուջեից բնապահպանական ծրագրերի իրականացման համար ի՞նչ մեխանիզմով են սուբվենցիաներ տրամադրվում (պահանջ 5.2)

Ըստ «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի՝ բնապահպանական հարկերից համայնքների վարչական և ֆոնդային բյուջեներ մուտքագրվող մասհանումները հանդիսանում են նպատակային միջոցներ և օգտագործվում են տվյալ համայնքների տարածքում բացառապես բնապահպանական ծրագրերի իրականացման համար: Բնապահպանական ծրագրի նախագիծը մշակվում է համայնքի ղեկավարի կողմից: 2018թ. համայնքներին հատկացվել է 200,163,000 դրամ, որից՝ 132,038,000 դրամը բնապահպանական միջոցառումների համար և 68,125,000 դրամը առողջապահական միջոցառումների համար:


**REPUBLIC OF ARMENIA EXTRACTIVE
INDUSTRIES TRANSPARENCY INITIATIVE
(EITI) SUMMARY REPORT 2018**

Published in September 2020

GENERAL INFORMATION

- The Extractive Industries Transparency Initiative (EITI) is a global Standard to promote the open and accountable management of natural resources
- In the framework of EITI, the main decision-making body is Multi-Stakeholder Group (MSG) comprised of the representatives from the government, companies and civil society.

THE EITI PROCESS IN ARMENIA



RECONCILING FINANCIAL STREAMS AND MINING COMPANIES

*The following revenue streams for the reporting period (2018) have been reconciled in the framework of the Report:



Profit tax



Income tax



Value added tax



Royalty



Customs duties and fees



Rent payments

*According to the decision of the MSG, the revenue streams from the extractive sector the share of which in the total extractive sector revenues is 1% or higher are deemed to be material and must be reconciled in the EITI Report (protocol N12 of MSG meeting, 16.04.201917). https://www.eiti.am/file_manager/EITI%20Documents/Minutes/MSG_meeting_minute_16_04_2019.pdf

** The following mining companies for the reporting period have been reconciled in the framework of the Report:



"Zangezur Copper-Molybdenum Combine" CJSC



"Geopromining Gold" LLC



"Chaarat Kapan" CJSC



"Akhtala Mining and Processing Enterprise" CJSC



"Teghout" CJSC



"Agarak Copper Molybdenum Combine" CJSC



"Lydian Armenia" CJSC



"Ler-Ex" LLC



"Meghradzor Gold" LLC

